ՀՀ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

MINISTRY OF CULTURE AND YOUTH AFFAIRS OF RA
HISTORY MUSEUM OF ARMENIA
NON – COMMERCIAL STATE ORGANIZATION

N 06-98 «08» 07 2014 թ.

<<ԳԱԿ-ՇՀԾՁԲ-11/2>> ծածկագրով Շրջանակային

համաձայնագիր կնքած բոլոր հնարավոր Մասնակիցներին

«ՀՊԹ-ՇՀԾՁԲ-11/2-1» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում <<Հայաստանի պատմության թանգարան>> ՊՈԱԿ–ի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերելու <<ԳԱԿ-ՇՀԾՁԲ-11/2>> ծածկագրով շրջանակային համաձայնագրով նախատեսված ապրանքները:

Հայտնում եմ Ձեզ, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել <<Հայաստանի պատմության թանգարան>> ՊՈԱԿ ք. Երևան Հանրապետության հրապարակ 4 հասցեով, մինչև 2014թ. հուլիսի 11-ի, ժամը 11<sup>00</sup>-ն:

Հայտերը կբացվեն <<Հայաստանի պատմության թանգարան>> ՊՈԱԿ-ի շենքում, Հանրապետության հրապարակ 4 հասցեով հասցեով 2014թ. հուլիսի 11-ին, ժամը 11<sup>00</sup>-ին:

Հայտը ներառում է գնման ընթացակարգին մասնակցելու դիմումը և գնային առաջարկը: Հայտն անհրաժեշտ է ներկայացնել ԳԱԿ- ՇՀԾՁԲ-11/2 ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

Եթե, Հրամանով հաստատված ցանկում ներառված կոնկրետ գնման գործընթացի մասով, Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտով նախատեսված է, որ մասնակիցը Օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված պահանջներին իր տվյալների համապատասխանության ապահովման և/կամ գնահատման համար պետք է պատվիրատուին ներկայացնի այլ (լրացուցիչ) փաստաթղթեր և/կամ տվյալներ, ապա նշված փաստաթղթերը և/կամ տվյալները պատվիրատուին ներկայացնում է ընտրված մասնակիցը՝ մինչև Կարգի 110-րդ կետի 7-րդ ենթակետով սահմանված կարգով պայմանագրի կնքումը: Ընդ որում՝

-նման փաստաթղթերի և/կամ տվյալների ներկայացման և գնահատման կարգը սահմանվում է շրջանակային համաձայնագրով՝ հիմք ընդունելով Օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի և կարգի 75-րդ կետի պահանջները,

-նման պահանջի դեպքում, մասնակիցներից պահանջվող փաստաթղթերի ցանկը և վավերապայմանները, ինչպես նաև մասնակցության իրավունքի և որակավորման գնահատման կարգը պետք է նախատեսված լինի շրջանակային համաձայնագրեր կնքած մասնակիցներին պատվիրատուի կողմից ուղարկվող հրավերով (ծանուցմամբ)՝ հղում կատարելով Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտի համապատասխան (կոնկրետ) դրույթին ի կատարումն որի պահանջվում են լրացուցիչ փաստաթղթերը և/կամ տվյալները:

Հարգանքով

Տնօրեն՝ Ա. Գրիգորյան

ՀՀ, Երևան 0010, Հանրապետության հրապարակ 4, հեռ. (374 10) 52 06 91, 58 27 61, Ֆաքս (37410) 56 53 22
Republic Square 4, Yerevan 0010, RA, tel.: (374 10) 52 06 91, 58 27 61, Fax (374 10) 56 53 22
museum@historymuseum.am